Culture & Creativity
EU-Eastern Partnership Programme

ՍՏԵՂԾԱՐԱՐ ՔԱՂԱՔՆԵՐ ԵՎ ՄԱՐԶԵՐ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ: ՍԻՍԻԱՆ ՔԱՂԱՔԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Օլենա Պրավիլո

Ծրագիրը ֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից

Ծրագիրն իրականացվում է Բրիտանական խորհրդի կողմից գլխավորվող կոնսորցիումի կողմից՝ Մոլդովայի
Սորոս հիմնադրամի, Լեհաստանի մշակույթի ազգային կենտրոնի և Գյոթե ինստիտուտի հետ համատեղ

Մշակույթ և ստեղծարարություն
ԵՄ Արևելյան գործընկերության ծրագիր

Այս զեկույցը պատրաստվել է ԵՄ՝ Արևելյան գործընկերության «Մշակույթ և ստեղծարարություն» ծրագրի աջակցությամբ: Այս զեկույցի բովանդակությունը չի արտացոլում Եվրոպական միության պաշտոնական դիրքորոշումը:

Այս հրատարակությունում զետեղված տեղեկատվության և կարծիքների համար ողջ պատասխանատվությունը կրում է հեղինակը:

Զեկույցը հրապարակվել է 2017 թ. սեպտեմբերին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն **4**

2. Սիսիան քաղաքի ընդհանուր ակնարկ **4**

3. Ստեղծարար քաղաքներ և մարզեր նախաձեռնությունը Սիսիանում **6**

3.1. Նախագծի ժամանակացույց *7*

3.2. Նախագծի թիմը և շահառուները *7*

3.3. Մշակութային ռեսուրսների քարտեզագրում *8*

4. Ստեղծարար Սիսիան ռազմավարություն **17**

4.1. Առաջին փուլ՝ տաղանդների կրթում և իրազեկության բարձրացում *17*

4.2. Երկրորդ փուլ. անհրաժեշտ պայմանների ստեղծում *19*

4.3. Երրորդ փուլ: օժանդակ էկոհամակարգ *22*

5. Հավելյալ օրինակներ **25**

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԵՄ՝ Արևելյան գործընկերության «Մշակույթ և ստեղծարարություն» ծրագրի շրջանակում իրականացվող «Ստեղծարար քաղաքներ և մարզեր» նախաձեռնությունը մեկնարկել է 2016թ.՝ նպատակ ունենալով ցույց տալ մշակույթի և ստեղծարարության կարևորությունը մարզերում և մարզային քաղաքներում: Նախաձեռնությունը խրախուսում է Արևելյան գործընկերության երկրներին հասարակական և տնտեսական զարգացման գործում օգտագործել մարզերի մշակութային և ստեղծարար ներուժը:

Նախաձեռնության նպատակն է հիմնական շահառուներին իրազեկել մշակութային և ստեղծարար ոլորտներում առկա ներուժի մասին, տվյալներ հավաքագրել այնտեղի մշակութային և ստեղծարար աղբյուրներից, ինչպես նաև առաջարկել հստակ գործողության նախագծեր մշակութային և ստեղծարար արդյունաբերության ներուժի զարգացման համար՝ ներառյալ մշակութային լանդշաֆտի զարգացումը, բիզնեսների հետ համագործակցությունը, զբոսաշրջության ոլորտի որակի բարձրացումը և այլ երկրների նման քաղաքների կամ մարզերի հետ ավելի կայուն կապերի հաստատումը:

Նախաձեռնության արդյունքում ծրագիրը հրապարակել է «Լավագույնս օգտագործելով մշակութային և ստեղծարար ռեսուրսները՝ ստեղծարար քաղաքների և մարզերի քարտեզագրման և ռազմավարության մշակման ձեռնարկ» [1], որն անվճար հասանելի է ներբեռնման համար և կարող է քաղաքներին և մարզերին տրամադրել գործնական մեխանիզմներ և

առաջարկներ վերջիններիս տեղական ռեսուրսները զարգացնելու համար:

2. ՍԻՍԻԱՆ ՔԱՂԱՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ

Սիսիանը քաղաք է Հայաստանի Սյունիքի մարզում: Գտնվում է Երևանից մոտ 217 կմ և Կապանից մոտ 115 կմ հեռավորության վրա, Երևան-Մեղրի ավտոմայրուղուց 6 կմ հարավ, Որոտան գետի երկու ափերին: Հին ժամանակներում, իսկ հետո միջնադարում Սիսիանը հայտնի էր որպես Սիսական, Սիսիան և Սիսավան:

[1] https://www.culturepartnership.eu/en/article/mapping-and-strategy-building-handbook

Այնուամենայնիվ, մինչև 1935 թվականը պահպանվում էր թուրք կառավարիչների կողմից գործածության մեջ դրված Ղարաքիլիսա անվանումը: 1935թ. վերականգնվում է հնագույն անուններից մեկը՝ Սիսավանը: Վերջապես 1940թ. քաղաքը վերանվանվեց Սիսիան: Քաղաքի մշտական բնակչությունը 2011 թվականի մարդահամարի արդյունքներով կազմել է 14,894 մարդ: 2017թ. հոկտեմբերին նախատեսվող համայնքների խոշորացման ծրագրով հաշվարկվել է, որ քաղաքն իր շրջակա գյուղերի հետ միավորելուց հետո կունենա մինչև 30,000 բնակիչ:

Սիսիանը գտնվում է Հայաստանի հարավային լեռնային շրջանում՝ ներառելով կիսաանապատային, չոր տափաստանային, անտառային, ալպյան և ենթալպյան մարգագետիններ և ձնառատ գոտիներ: Քաղաքն ունի հարուստ կենսաբազմազանություն՝ բացառիկ բուսական և կենդանական աշխարհ, որը գրավում է միջազգային բնապահպանների ուշադրությունը: Տարածքը հարուստ է օգտակար հանածոներով, այդ թվում՝ պղնձի, մոլիբդենի, ցինկի, ոսկու, արծաթի, ինչպես նաև շինարարության մեջ օգտագործվող կրաքարի և գրանիտի պաշարներով: Գյուղատնտեսները աճեցնում են բանջարեղենի և մրգի մի շարք տեսակներ: Արտադրանքը վաճառվում է շուկաներում, հավելյալ եկամուտ հանդիսանալով ընտանիքների համար: Այնուամենայնիվ, ոռոգման բացակայության պատճառով գյուղատնտեսական հողերի մեծ մասը լքված է կամ անմշակ:

Սիսիանը և շրջակա 35 գյուղերն ունեն այս շրջանին հատուկ հարուստ մշակույթ և պատմություն, որին, ցավոք, Հայաստան այցելող զբոսաշրջիկների մեծամասնությունն անտեղյակ է: Ազգային հարստություն հանդիսացող Զորաց քարեր հուշարձանը և Ուխտասարի ժայռապատկերները հանգրվանել են խենթացնող լեռնային տեսարանների և զարմանահրաշ հովիտների հարևանությամբ: Շատերի համար Սիսիանը հանդիսանում է Սյունիքի հյուսիսային շրջանների մշակույթի և ստեղծարարության հանգույց: Բազմաթիվ վանքերից բացի, որոնց թվում են 11-րդ դարի Որոտնավանքը և 8-րդ դարի Թանահատի վանքը, այս տարածաշրջանը հայտնի է իր գեղեցիկ բնությամբ, իսկ արշավի արահետները տանում են դեպի անսպասելի գանձեր, ինչպիսիք են Տոլորսի ջրամբարի ներքևում թաքնված Տոլորսի վանքը, կամ Աղիտուի քարանձավները, որոնք բնակեցված են եղել դեռևս 40,000 տարի առաջ:

Շրջանը հարուստ է նաև մշակութային օջախներով՝ կան մշակույթի բազմաթիվ կենտրոններ, երաժշտական դպրոցներ, պարի դպրոցներ և թանգարաններ: Շրջանի երեխաները հաճախում են Սիսիանի արվեստի դպրոց, այցելում են Ազգային պատկերասրահի Սիսիանի մասնաճյուղի ցուցահանդեսները և տեղի շախմատի դպրոցում բարելավում են շախմատ խաղալու հմտությունները Սամվել Մկրտչյանի օգնությամբ: Ավելի քան 929 աշակերտ հաճախում է Սիսիանի տարբեր մշակութային դպրոցներ, ինչպես նաև մասնակցում ազգային պարերի մրցույթներին, ելույթ ունենում մայրաքաղաքում մեծաքանակ հանդիսատեսի առաջ կամ ստեղծում արվեստի նմուշներ քաղաքի մշակույթի կենտրոնում:

Քաղաքային կառույցներին աջակցում են ակտիվ քաղաքացիական հասարակության կամ մասնավոր հատվածի ներկայացուցիչները, որոնք ներդրումներ են իրականացնում արվեստի և ստեղծարարության ոլորտներում: Նմանատիպ մի նախաձեռնություն է Սիսիանի մեծահասակների կրթության

կենտրոնը, որը ֆինանսավորում է ԴՎՎ Ինթերնեյշնլ կազմակերպությունը: Այս ոլորտներում ակտիվ ներգրավված են համայնքի արվեստագետները, ովքեր ընդունում են արվեստը իր բոլոր ձևերով, որոնց թվում են Զառա Գասպարյանի գեղեցիկ ձեռագործ բատիկաները և Աշոտ Ավագյանի կատարողական արվեստի բացառիկ նմուշները, որտեղ ներկայացվում են Սիսիանի մշակույթը և համայնապատկերները:

Սիսիանի բնական գեղեցկությունը և եռանդուն համայնքը թույլ են տալիս քաղաքում ծավալել ստեղծագործական բազմապիսի աշխատանքներ: Քաղաքը հաճախ հյուրընկալում է երգիչներ, կատարողներ և թատերական խմբեր ինչպես Հայաստանից, այնպես էլ Ռուսաստանից: Յուրաքանչյուր օր այցելուներին կարելի է զբաղեցնել քաղաքի կենտրոնում ցուցադրվող ֆիլմերով, մշակույթի կենտրոնում բեմադրվող ներկայացումներով կամ պատկերասրահի նոր ցուցադրությամբ: Դրան անհրաժեշտ է ավելացնել քաղաքապետարանի և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների կողմից կազմակերպվող միջոցառումները, այդ թվում՝ Երիտասարդության օրվա տոնակատարությունները, Հացի փառատոնը և Ազնվամորու փառատոնը: Այս միջոցառումներից յուրաքանչյուրը Սիսիան է բերում մասնակիցներ ոչ միայն շրջակա բնակավայրերից, այլ ամբողջ Հայաստանից և ինչը վկայում է խանդավառությունը, որ Սիսիանի ժողովուրդը զգում է իր շրջանի մշակույթի և ժառանգության նկատմամբ:

Բոլոր շահառուները՝ արվեստագետները, հասարակ քաղաքացիները, ձեռնարկատերերը և քաղաքապետարանի ներկայացուցիչները, պատրաստ են աշխատել տարբեր մշակութային նախաձեռնությունների կամ նախագծերի հետ, որոնք ի վերջո կարող են օգնել զարգացնել քաղաքի ստեղծարար, ձեռնարկատիրական, քաղաքացիական հասարակության և կրթական ոլորտները:

3. ՍՏԵՂԾԱՐԱՐ ՔԱՂԱՔՆԵՐ ԵՎ ՄԱՐԶԵՐ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆԸ ՍԻՍԻԱՆՈՒՄ

Սիսիանի քաղաքապետարանը Ստեղծարար քաղաքներ և մարզեր նախաձեռնությանը մասնակցելու հայտ էր ներկայացրել հետևյալ պատճառներով՝

- Այս նախաձեռնությունը թույլ կտա քաղաքին առավել զարգացնել իր բացառիկ ստեղծարար և մշակութային ռեսուրսները և ամբողջովին օգտագործել իր ներուժը;
- Քարտեզագրման և ճանապարհային քարտեզի մշակման աշխատանքները թույլ կտան տեղի բնակչությանը բացահայտել ամենակարևոր ռեսուրսները և դրական ազդեցություն ունենալ քաղաքի սոցիալական և տնտեսական զարգացման գործում;
- Այս գործընթացը կբարձրացնի քաղաքի բոլոր շահառուների իրազեկվածությունը, իսկ աշխատանքային հանդիպումների, դասընթացների և քարտեզագրման աշխատանքների շնորհիվ կիրականացվի կարողությունների զարգացում:

3.1. Նախագծի ժամանակացույց

Հունվար 2017 թ.	• 14 քաղաք Հայաստանից դիմել է նախաձեռնությանը
Փետրվար 2017 թ.	• Սիսիանը և Արևելյան գործընկերության երկրների 5 քաղաք ընտրվել են պիլոտային ծրագրի համար
Մարտ 2017 թ.	•Ռազմավարության, փաստաթղթերի և առցանց ռեսուրսների նախնական ուսումնասիրություն •Նախնական այց՝ հանդիպում տեղի գործընկերների հետ
Ապրիլ 2017 թ.	• Երկրորդ այց՝ տեղի շահառուների ներուժի և կարիքների վերլուծություն
Մայիս 2017 թ.	• Մոլդովայի ֆորումին ընտրված 6 քաղաքների ներկայացուցիչների հանդիպում • Երրորդ աշխատանք՝ խմբային հանդիպումներ հիմնական շահառուների հետ (ստեղծարար արդյունաբերություն, զբոսաշրջություն, մշակույթ)
Հունիս 2017 թ.	• Հետազոտության նախնական արդյունքների ներկայացում •Քննարկում տեղի շահառուների հետ, հանդիպում ՀԿ-ների և երիտասարդների հետ
Հուլիս 2017 թ.	• Հավաքագրված նյութերի վերլուծություն, առաջարկությունների մշակում •Առաջարկությունների հանրային ներկայացում, հանրային քննարկում Սիսիանում
Օգոստոս 2017 թ.	• Զեկույցի եզրափակում, վերջնական առաջարկությունների կազմում
Սեպտեմբեր 2017 թ.	• Զեկույցի հարապարակում

3.2. Նախագծի թիմը և շահառուները

Նախագծի հիմնական թիմը

- **Լիա Գիրալդի** (ՄԹ), Ստեղծարար քաղաքներ և մարզեր նախաձեռնության ավագ փորձագետ
- **Օլենա Պրավիլո** (Ուկրաինա), Ստեղծարար քաղաքներ և մարզեր նախաձեռնության կրտսեր փորձագետ
- **Ռագնար Սիլ** (Էստոնիա), ԵՄ՝ Արևելյան գործընկերության «Մշակույթ և ստեղծարարություն» ծրագրի գլխավոր փորձագետ
- **Նորայր Երզնկյան** (Հայաստան), ԵՄ՝ Արևելյան գործընկերության «Մշակույթ և ստեղծարարություն» ծրագրի ազգային համակարգող
- **Հասմիկ Ասատրյան** (Հայաստան), Սիսիանի Բասեն հյուրանոցի գլխավոր տնօրեն, Սիսիանում նախագծի համակարգող

- **Հայկուհի Բլբուլյան** (Հայաստան), Սիսիանի քաղաքապետարանի կազմակերպչական բաժնի ղեկավար

Հետազոտության մասնակիցները (ավելի քան 70 հոգի)՝

- Սիսիանի քաղաքապետարան (քաղաքապետ, փոխքաղաքապետ, քարտուղար)
- Էմմա Ասյանի անվան Սիսիանի մանկական երաժշտական դպրոց, Զաքար Խաչատրյանի անվան մանկական գեղարվեստական դպրոց, և Սիսիան քաղաքի մանկական արվեստի դպրոց
- Սիսիանի շախմատի դպրոց և Սիսիանի ֆուտբոլի դպրոց
- Աղվան Մինասյանի անվան մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն
- Հ. Սահյանի անվան Սիսիանի քաղաքային մշակույթի կենտրոն
- Սիսիանի քաղաքային գրադարան
- Սիսիանի մշակույթի կենտրոնի ժողգործիքների անսամբլ
- Սիսիանի թատերական խումբ
- Սիսիանի «Գրանդ» պարային ակումբ
- Նիկողայոս Ադոնցի անվան Սիսիանի պատմության թանգարան
- Ազգային Պատկերասրահի Սիսիանի մասնաճյուղ
- Սիսիան կերամիքս
- Astre բատիկա
- Սիսիանի փայտագործ և քարագործ
- Սիսիանի մարզական դպրոց
- Հայաստանի պետական ագրարային համալսարանի Սիսիանի մասնաճյուղ
- Քիքբոքսինգի խումբ
- «Որոտան» հասարակական-քաղաքական թերթ
- «Վիկտորիա» ազնվամորի արտադրողների խումբ
- Սիսիանի և հարակից գյուղերի ինժեներական լաբորատորիաներ՝ Սիսիանի ավագ դպրոցի ինժեներական լաբորատորիա, Սիսիանի թիվ 2 հիմնական դպրոցի ինժեներական լաբորատորիա, Ծղուկ գյուղի միջնակարգ դպրոցի ինժեներական լաբորատորիա, Շաղատ գյուղի միջնակարգ դպրոցի ինժեներական լաբորատորիա,Սիսթիմ ծրագրավորողների խումբ
- Սիսիանի և շրջակա գյուղերի հյուրանոցները և հյուրատները՝ Բասեն հյուրանոց, Լալաներ հյուրանոց, Դինա հյուրանոց, Զորաց քարեր հյուրատուն, MJA ռիզորթ, Ազոյան հոլիդեյ ռիզորթ
- Սիսիանի հիմնական դպրոց
- Սիսիանի մեծահասակների կրթության կենտրոն
- Զորաց քարեր (Քարահունջ) պատմամշակութային արգելոց
- Աշոտ Ավագյանի քանդակների պուրակ
- Վորլդ Վիժն Հայաստանի Սիսիանի գրասենյակ
- Ուրբանլաբ Երևան – Սարհատ Պետրոսյան
- ԱՄՆ Խաղաղության կորպուսի կամավորներ

3.3. Մշակութային ռեսուրսների քարտեզագրում

Մշակութային ռեսուրսների քարտեզագրումը հիմնված է համակցված մոտեցման վրա, որը ներառում է դաշտային այցելություններ, ֆոկուս խմբերի ձևավորում և խմբային հանդիպումներ մշակույթի, երիտասարդության, բիզնեսի, քաղաքային իշխանությունների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների

հետ: Տվյալների հավաքագրման և վերլուծության համար կիրառվել են տարբեր մեթոդներ, այդ թվում՝ Սվոթ (SWOT) վերլուծություն, խնդրի և նպատակի ծառի վերլուծություն և մտագրոհներ: Հետազոտության արդյունքում նախանշվել են հետևյալ հիմնական ռեսուրսները՝

3.3.1. Մշակութային հաստատությունների ցանց

Մշակութային հաստատությունների ցանցը հատկապես լավ է աշխատում երեխաների և դեռահասների հետ՝ զարգացնելով նրանց ստեղծագործական ներուժը:

Մարտահրավերները՝

- *Մշակութային զարգացման բացակայություն և քաղաքի բնակչության ներգրավվածության պակաս տեղի արվեստի կամ երաժշտական դպրոցն ավարտելուց հետո;*

- *Տեղի մշակութային հաստատություններին օրենքով արգելվում է զբաղվել շահույթ հետապնդող գործունեությամբ, և միայն մշակույթի կենտրոնը հնարավորություն ունի տոմսեր վաճառել կամ վարձակալության հանձնել դահլիճը: Համակարգը չի խրախուսում հաստատություններին, քանի որ ստանալով որոշակի եկամուտ, վերջիններս նման չափով եկամուտ կորցնում են քաղաքային սուբսիդավորումից և ստանում են վաստակած գումարի մինչև 10 տոկոսը:*

- *Ռեսուրսների բացակայության պատճառով տեղի ուսանողները չունեն հնարավորություն մասնակցել քաղաքից դուրս անցկացվող մրցույթներին կամ ցուցադրել իրենց ձեռքբերումները: Այդ նպատակներով օգտագործվում են միայն մասնավոր գումարներ, որոնք միշտ չեն հասանելի, և հաստատությունները հայտնվում են կախվածության մեջ:*

- *Արվեստի և պարի դպրոցների, գրադարանի և թանգարանի վիճակը: Գրադարանի ջերմապահովման համակարգը հնացած է և այն վնասում է գրքերը, պարի դպրոցում հատակը վտանգավոր է երեխաների համար, իսկ ջեռուցման համակարգը բացակայում է և այլն: Միայն մշակույթի կենտրոնն է վերջերս վերանորոգվել և հագեցած է անհրաժեշտ սարքավորումներով և ջեռուցման համակարգով:*

- *Քաղաքապետարանում չկա մշակույթի բաժին:*

Հնարավորությունները՝

- *Մեծահասակների և զբոսաշրջիկների համար սեմինարների շարքի մշակում, ինչը հաստատություններին հնարավորություն կտա ստանալ լրացուցիչ եկամուտ;*

- *Հիմնադրամի ստեղծում, որն աջակցություն ցույց կտա տեղի մշակութային հաստատություններին և կդեկավարվի ոչ թե տեղական ինքնակառավարման մարմինների, այլ տեղի համայնքի ներկայացուցիչների կողմից: Հիմնադրամը կարող է նվիրվատվություններ*

ստանալ հովանավորներից, եկամուտ ստանալ սեմինարների մասնակիցներից և այլ աշխատանքներից: Գումարները կարող են օգտագործվել հաստատությունների կարիքները հոգալու համար, օրինակ՝ ապահովել երեխաների ճանապարհածախսը, հրավիրել արտասահմանցի փորձագետների, ձեռք բերել նոր բեմական հագուստ, գրքեր և այլն:

- *Սփյուռքում մշակութային հաստատություններին աջակցելու ծրագրի տարածում, նպաստելով երեխաների համար լավ պայմաններ ապահովելուն: Վորլդ Վիժն կազմակերպությունը կարող է դառնալ այս քարոզարշավի խորհրդատու և իրականացնող: Ծրագիրն անհրաժեշտ է իրականացնել տարբեր ՀԿ-ների հետ և այն պետք է ներառի ոչ միայն վերանորոգման աշխատանքներ, այլ նախաձեռնություններ կրթության բնագավառում, նախագծեր մշակութային և ստեղծարար ոլորտներում, ինչպես նաև ունենա ձեռնարկատիրության և քաղաքացիական հասարակության կարողությունների զարգացման բաղադրիչ:*

- *Տեղի բնակիչների, ձեռնարկատերերի և արտասահմանցի մասնագետների հետ համատեղ գրավիչ և ներառական թանգարանային ծրագրերի մշակում;*

- *Գրադարանը կարող է ավելի գրավիչ միջավայր ստեղծել երեխաների և մեծահասակների համար, կազմակերպել հանդիպումներ և ընթերցումներ հեղինակների հետ: Գրադարանի աշխատակիցները կարիք ունեն հատուկ դասընթացների, որտեղ կսովորեն ակտիվացնել և ներգրավել բնակչությանը:*

- *Անհրաժեշտ է մեծացնել Սիսիանում ապրող տաղանդաշատ քաղաքացիների և ծագումով սիսիանցիների վերաբերյալ իրազեկվածությունը՝ հրապարակելով պատմություններ տեղական թերթում կամ առցանց լրատվամիջոցներում, պատրաստելով տեսահոլովակներ կամ աշակերտներին հանձնարարելով դպրոցական հետազոտություններ:*

3.3.2. Զբոսաշրջություն

Բացի առկա հաստատություններից քաղաքում իրականացվում են մի քանի նոր նախաձեռնություններ, որոնցից առավել հատկանշական է սիսիանցի ձեռնարկատեր Հասմիկ Ազոյանի ղեկավարած զբոսաշրջության ասոցիացիայի գործունեությունը: Այս ասոցիացիան հնարավորություն է տալիս հյուրանոցներին և հացատներին համագործակցել շրջանի զբոսաշրջությունը լավագույնս գովազդելու գործում, և մասնավորապես զբոսաշրջության զարգացումը ուղեկցել մշակութային և ստեղծարար արվեստի զարգացմամբ: Սիսիանում գործում են Բասեն, Լալաներ և Դինա հյուրանոցները, որոնք սպասարկում են քաղաքի առանձնահատուկ մշակութային և ստեղծագործական վայրերը այցելած զբոսաշրջիկներին:

Մարտահրավերները՝

- *Սպասարկման ոլորտում աշխատուժի պակաս և հյուրընկալության ոլորտում մատուցվող ծառայությունների ցածր որակ: Աշխատակիցները*

չունեն անգլերենի և այլ լեզուների անհրաժեշտ իմացություն՝ արտերկրյա զբոսաշրջիկներին գրավելու համար (բացառությամբ ռուսաստանյան զբոսաշրջիկների):

- *Երիտասարդների համար աշխատանքը հյուրանոցային կամ ռեստորանային բիզնեսում ոչ գրավիչ է, ոչ էլ հեղինակավոր:*

- *Քաղաքի մասին տեղեկատվությունը լիարժեք և համակարգված չէ, զբոսաշրջային ենթակառուցվածքները հաճախ հնացած են, քաղաքում չկան զբոսաշրջիկների համար ուղեցույցներ և բացակայում են ինչպես քաղաքային քարտեզները, այնպես էլ զբոսաշրջիկների համար նախատեսված հեռախոսային հավելվածները:*

- *Տեղի զբոսաշրջության ոլորտը բավականին մասնատված է և ոլորտում ներգրավված շահառուները հիմնականում մրցակցում են, այլ ոչ թե համագործակցում:*

Հնարավորությունները՝

- *Զբոսաշրջության տեղեկատվական կենտրոնի ստեղծում, որը կներկայացնի քաղաքի վերաբերյալ տեղեկատվություն և կօգնի համախմբել զբոսաշրջության ոլորտում ծառայություն մատուցողներին: Անհրաժեշտ է մշակել տեղի զբոսաշրջության զարգացման ռազմավարություն, որը կներառի ինչպես ղեկավար մարմիններին և ձեռնարկատիրական համայնքը, այնպես էլ մշակութային և ստեղծարար ռեսուրսները:*

- *Տեղական փառատոները և հանրային միջոցառումները կարող են դառնալ զբոսաշրջության զարգացման շարժիչ ուժ և քաղաք բերել նոր մարդկանց և գաղափարներ: Զբոսաշրջիկները և տաղանդաշատ մարդիկ ցանկանում են ավելի երկար մնալ Սիսիանում, կան արտերկրացիներ, ովքեր ընտրել են Սիսիանը իրենց մշտական բնակության համար:*

- *Զբոսաշրջության ոլորտում ներգրավված տեղացի մասնագետների կարողությունների զարգացում, ինչպես զբոսաշրջության այնպես էլ հարակից ոլորտներում;*

- *Զբոսաշրջության զարգացման համար նյութերի և գործիքների մշակում, այդ թվում՝ զբոսաշրջային երթուղիների, մշակութային և ստեղծագործական քարտեզների, հեռախոսային հավելվածների և այլն:*

- *Քաղաքապետարանն աշխատում է բարելավել Սիսիանի և շրջակա գյուղերի միջև գործող ենթակառուցվածքները: Սա թույլ կտա ունենալ ավելի սերտ համագործակցություն տարբեր դերակատարների միջև և էլ ավելի տարածել ծառայությունների և միջոցառումների ինտեգրացումը տարածաշրջանում:*

- *Քաղաքը տեղակայված է հայտնի զբոսաշրջային երթուղիների հարևանությամբ: Երևանից Տաթև գնացող զբոսաշրջիկների ուշադրությունը գրավելու համար անհրաժեշտ է ճանապարհային նշաններ և հատուկ քարտեզներ տեղադրել Սիսիանից ոչ հեռու անցնող մայրուղու վրա, որոնք*

կհրավիրեն զբոսաշրջիկներին այցելել Սիսիան:

- *Քաղաքում գործում է կանանց ամուր ցանց՝ հյուրանոցի կառավարիչներ, արհեստավորներ, քաղաքացիական ակտիվիստներ, ովքեր համագործակցում են Սիսիանը զարգացնելու ուղղությամբ: Վերջերս գրանցվել է ոչ պետական կազմակերպություն, որը կարող է դառնալ քաղաքացիներին երկխոսության հրավիրող առաջին գործիքը: Աջակցությունը քաղաքացիական հատվածին կարող է քաղաքում երկարատև փոփոխությունների հիմք ծառայել:*

3.3.3. Արհեստներ

Սիսիանում ապրում և ստեղծագործում են գեղարվեստական արվեստի եզակի նմուշներ կերտող ստեղծագործողներ, այդ թվում՝ արդեն որոշակի համբավ ձեռք բերած Սիսիան կերամիքսը, բատիկայի արտադրությամբ զբաղվող "Astre"–ն, փայտագործը և քարտաշը: Տեղի բնակիչներից շատերը զբաղվում են նաև ավանդական գորգագործությամբ, կարպետագործությամբ և ասեղնագործությամբ: Սիսիան կերամիքսը մասնավոր նախաձեռնություն է, որն աշխատում է պահպանել կավի արտադրության ավանդույթները: Բասեն հյուրանոցը կազմակերպում է ուղևորություններ դեպի մարզի հայտնի մշակութային վայրեր:

Մարտահրավերները՝

- *Քաղաքի արհեստագործների գործարար հմտությունների ցածր մակարդակ;*

- *Քաղաքային շուկան շատ սահմանափակ է, իսկ այլ շուկաներ մուտք գործելը շատ դժվար: Քաղաքի բնակչության և զբոսաշրջիկների իրազեկվածությունը քաղաքի ստեղծագործողների մասին շատ սահմանափակ է, և այցելուները չեն գտնում քաղաքի վարպետներին:*

Հնարավորությունները՝

- *Մարքեթինգային հմտությունների զարգացումը և ձեռնարկատիրական ռազմավարության մշակումը նոր հնարավորություններ կստեղծեն արհեստագործների համար: Տարբեր վարպետների համագործակցությունը խրախուսելու ճանապարհներից է համատեղ արտադրություն կամ մարքեթինգ ծավալելը:*

- *Քաղաքի հյուրանոցները և ռեստորանները շատ հարմար վայր են վարպետների աշխատանքները ներկայացնելու համար, քանի որ դրանք լավ ներկայացված չեն:*

- *Սիսիանում նախատեսվում է ստեղծել Արհեստների կենտրոն, որը կդառնա ոչ միայն արտադրության կենտրոն, այլ նաև կհամագործակցի թանգարանի և արվեստի դպրոցի հետ՝ քաղաքի եզակի ժառանգությունը պահպանելու և ներկայացնելու նպատակով:*

- *Արհեստագործները պետք է աշխատեն իրենց արտադրանքի որակը*

բարձրացնելու ուղղությամբ, համագործակցեն դիզայներների հետ արտադրանքն ավելի ժամանակակից և հետաքրքիր դարձնելու համար, որն իր հերթին կգրավի միջազգային շուկայի ուշադրությունը։

3.3.4. Շախմատի դպրոց, դասարաններ և ինժեներական լաբորատորիաներ

Հայաստանում ինժեներական լաբորատորիաների հիմնական նպատակն է բավարարել ինժեներական արդյունաբերությունում որակյալ մասնագետների և ժամանակակից տեխնոլոգիական բազայի վրա հիմնված շրջանավարտների պահանջարկը, դիմակայել որակյալ աշխատակիցների պակասին և ավելացնել Հայաստանում բարձր տեխնոլոգիաների բիզնեսի նորարարությունը, ավելացնելով վերջիններիս մրցունակությունը միջազգային շուկաներում։ Սիսիանում և շրջակա գյուղերում կա չորս ինժեներական լաբորատորիա։ Նրանք աշխատում են երեխաների և դեռահասների հետ։ Մինչև չորրորդ դասարան բոլոր աշակերտները պարտավոր են սովորել շախմատ, որից հետո հնարավորություն ունեն ներգրավվել ինժեներական լաբորատորիաներում՝ տեխնոլոգիական հմտությունները զարգացնելու նպատակով։

Մարտահրավերները՝

- *Քաղաքում ուսուցիչների պակաս։ Աշակերտները դպրոցն ավարտելուց հետո մեկնում են Երևան ուսումը շարունակելու և աշխատելու։*
- *Տեխնոլոգիական նախագծեր մշակելու համար անբավարար ռեսուրսներ;*
- *Սարքավորումների և ընդհանուր աշխատանքային տարածքների բացակայություն։*

Հնարավորությունները՝

- *Արվեստագետների և տեղի ձեռնարկությունների համագործակցությունը կարող է քաղաք բերել ավելի ստեղծարար նախագծեր և փորձագետներ։ Սիսիանը պետք է փորձի հետաքրքրել մեծ IT ընկերություններին համատեղ նախագծեր նախաձեռնելու համար։*
- *Ստեղծարար տարածքների զարգացումն արդեն իրականություն է ի շնորհիվ ակտիվ տեխնոլոգիական համայնքի։ Տեղական ՀԿ-ների ներգրավվածությունը կարող է աջակցել տեխնոլոգիական ձեռնարկություններին և ստարտափերին և ստեղծել առավել բարենպաստ աշխատանքային պայմաններ։*

3.3.5. Արտիստիկ համայնք

Սիսիանում գոյություն ունի արտիստիկ համայնք, որը համագործակցում է արվեստի դպրոցի հետ։ Արդյունքում արվեստի դպրոցի շրջանավարտների ավելի քան 10%-ը դառնում են նկարիչներ, ճարտարապետներ և ստեղծագործող այլ մասնագետներ։ Սիսիանի արվեստագետները, ինչպիսիք են Աշոտ Ավագյանը և

Զառա Գասպարյանը, իրենց ստեղծարարությունն արտահայտում են տարբեր ձևերով, սակայն կիսում են Սիսիանի ստեղծարար ոլորտը զարգացնելու ընդհանուր նպատակը: Զորաց քարեր պատմամշակութային արգելոցի վարիչ Աշոտ Ավագյանը արգելոցի մոտակա բլուրներից մեկի վրա ստեղծում է քանդակների պուրակ: Զառա Գասպարյանն աշխատում է շուկայի վրա և արտադրում է բատիկա (նկարազարդված մետաքսյա շարֆեր) և զարդեր՝ կավագործ վարպետի հետ համատեղ:

Մարտահրավերները՝

- Տաղանդավոր երիտասարդների արտագաղթը Սիսիանից;
- Արվեստագետների միջև մրցակցային միջավայրը և համագործակցության ցածր մակարդակը;
- Քաղաքի արվեստի շուկան թույլ է – քիչ արվեստագետներ են աշխատում արվեստի նախագծերի հետ և իրականացնում իրենց կատարումները կամ ցուցահանդեսները, սակայն արվեստի վաճառք տեղի չի ունենում, միայն ցուցադրություններ:

Հնարավորությունները՝

- Արվեստի ռեզիդենտության ծրագրերը պետք է աջակցություն ստանան տեղական ինքնակառավարման մարմինների, ձեռնարկությունների (հյուրանոցներ, հացատներ) և ՀԿ-ների կողմից, ինչը կարող է նոր հնարավորություններ ստեղծել քաղաքի արտիստիկ ծրագրերը զարգացնելու համար: ՀԿ-ների ներկայացուցիչները կարող են օգնել շատ ավելի նախագծեր մշակել արվեստագետների հետ՝ փոխանակումներ, դասընթացներ, նյութեր, ցուցահանդեսներ և այլն:
- Արվեստը կարող է դառնալ ձգող ուժ Սիսիանում մշակութային զբոսաշրջությունը զարգացնելու համար: Արվեստագետներն ունեն աջակցության կարիք և պետք է հրավիրվեն մասնակցելու տարբեր նախագծերի:

3.3.6. Մշակութային գործունեություն

Սիսիանում անց է կացվում մի քանի փառատոն՝Հացի փառատոն, Ազնվամորու փառատոն և Երիտասարդության օրվա տոնակատարություններ: Այս փառատոներից յուրաքանչյուրին մասնակցում է մինչև 500 մարդ: Մշակույթի տան կողմից կազմակերպված տեղական միջոցառումները հիմնականում ուղղված են երիտասարդներին և ընտանիքներին: Տեղի համայնքը համագործակցում է ինքնուրույն կազմակերպված ազգային պարի դասընթացների, կանանց շարժման և փառատոների միջոցով:

Մարտահրավերները՝

- *Փառատոների բազմազանությունը փոքր է և նրանց որակը բարելավման կարիք ունի: Քաղաքին միանշանակ ավելի շատ մշակութային միջոցառումներ են անհրաժեշտ, հատկապես նոր և ժամանակակից մշակութային ոլորտներում:*

- *Մշակութային միջոցառումները պետք է հաշվի առնեն զբոսաշրջության զարգացման կարիքները: Ներկայումս Սիսիանում անցկացվող միջոցառումներում բացակայում է եզակիությունը և նրանք բավարար չափով ուղղված չեն զբոսաշրջիկներ ներգրավելուն:*

Հնարավորությունները՝

- *Անհրաժեշտ է Սիսիան հրավիրել տաղանդավոր մշակութային կառավարիչներին, ովքեր կիրականացնեն նախագծեր տեղացիների հետ, որն իր հերթին նոր գաղափարներ կավելացնի քաղաքի մշակութային իրադարձություններում: Հարկավոր է մշակել գաղափարներ և իրականացնել միջոցառումներ տեղացիների հետ՝ այնպիսի նախագծեր իրականացնել, որոնք ուղղված կլինեն համայնքի զարգացմանը:*

- *Հնարավորություն կա կազմակերպել մշակութային միջոցառումներ լուրջ թեմաների շուրջ՝ համագործակցելով համալսարանների կամ միջազգային կառույցների հետ:*

3.3.7. Բնական և մշակութային ժառանգություն

Սիսիանի և իր շրջակա տարածքների յուրահատուկ բնական և մշակութային ժառանգությունը քաղաքը դարձնում է այցելուների համար գերազանց վայր: Քաղաքի շրջակայքում են գտնվում Զորաց քարերը (Քարահունջ), որը նախապատմական կառույց և հնագիտական տարածք է, Շաքիի ջրվեժը, Ուխտասարի ժայռապատկերները, Սուրբ Հովհաննես եկեղեցին, Որոտնավանքը և Տաթևի վանքը, ինչպես նաև բազմաթիվ գերեզմանոցներ՝ լի հայկական խաչքարերով:

Մարտահրավերները՝

- *Պատմական վայրերից շատերը լավ պահպանված չեն, որոշ դեպքերում նույնիսկ վտանգավոր այցելուների համար (վայրի կենդանիներ, անվտանգության միջոցների բացակայություն և այլն): Որոշ վայրերում բացակայում են նույնիսկ հիմնական զբոսաշրջային ենթակառուցվածքները:*

- *Ինչպես Հայաստանում, այնպես էլ արտերկրում բավականաչափ իրազեկված չեն շրջանի հարուստ ժառանգության մասին,: Զբոսաշրջիկների համար կան ընդամենը մի քանի ուղեցույց, իսկ զբոսաշրջային երթուղիները գործնականում զարգացած չեն:*

Հնարավորությունները՝

- *Էկոտուրիզմ – խոտաբույսերի հավաքում, բնապահպանական համաժողովներ, հատուկ երթուղիներ, տեղական բուսական կոսմետիկայի արտադրություն:*
- *Հնագիտական զբոսաշրջություն, միջազգային կառույցների հետ համատեղ համաժողովների և հետազոտական նախագծերի անցկացում;*

- *Սիսիանում արվեստանոց-հյուրատների ստեղծում, օրինակ նկարահանողների, գրողների, բլոգերների համար: Խթանել տաղանդավոր մարդկանց հոսքը Սիսիան, ովքեր կարող են տարածել յուրօրինակ բնության և վայրերի մասին պատմությունները ավելի լայն լսարանին;*
- *Նախաձեռնել տարածաշրջանի հուշարձանները ՅՈՒՆԵՍԿՕ-ի նախնական ցուցակ ընդգրկելու գործընթացը:*

3.3.8. Համագործակցությունը շրջակա տարածքների հետ

Սիսիանի շրջակա տարածքները ունեն համագործակցության ներուժ: Մոտակա գյուղերից մեկում կա «Դարբազ» հանքային ջրի արտադրություն, մեկ այլ գյուղում հիմնականում կենտրոնացած են ազնվամորու արտադրության վրա: Լոր գյուղում կա թանգարան, իսկ Վաղատինում ձևավորվում է ավանդական հարսանեկան արարողությունների կազմակերպման ձեռնարկատիրություն:

Մարտահրավերները՝

- *Այս գյուղերի ենթակառուցվածքը հնացած է և կարիք ունի լուրջ ներդրումների;*

- *Որոշ գյուղեր հեռու են գտնվում Սիսիանից և հեռավորությունը, ինչպես նաև տրանսպորտային կապերի անհասանելությունը խոչընդոտում են Սիսիանի և այդ գյուղերի համագործակցությանը:*

Հնարավորությունները՝

- *Շատ գյուղերում կան տեղացի ձեռագործ վարպետներ և նկարիչներ, ովքեր կարող են վաճառել իրենց արտադրանքը: Ցավոք, իրազեկվածությունը տեղական մշակութային հարստության մասին շատ ցածր է, հետևաբար անհրաժեշտ են փոքրածավալ նախագծեր, որոնք կաջակցեն այդ զարգացմանը, օրինակ՝ ստեղծեն մշակութային քարտեզներ, վերանայեն արվեստի միջամտությունները, իրականացնեն հնագիտական հետազոտություններ՝ վիդեո և ֆոտո վավերագրերով և այլն:*
- *Տեղացիների նոր նախաձեռնությունները՝ գյուղում հարսանեկան գործակալություն, որն իրականացնում է միջոցառումներ ավանդական ոճով և կարող է ոգեշնչել այլ տեղացիների գյուղական նախագծեր նախաձեռնելու համար;*
- *Կանաչ զբոսաշրջության և տեղական խոհանոցի նկատմամբ հետաքրքրության գլոբալ աճի պայմաններում լրացուցիչ հնարավորություններ են ստեղծվում զբոսաշրջության զարգացման համար:*

4. ՍՏԵՂԾԱՐԱՐ ՍԻՍԻԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

4.1. Առաջին փուլ՝ տաղանդների կրթում և իրազեկության բարձրացում

1. Սիսիանի պատմության բացահայտում

Յուրաքանչյուր քաղաք ունի իր չկրկնվող ԴՆԹ-ն՝ աշխարհագրական, ժողովրդագրական, տնտեսական և ինստիտուցիոնալ առանձնահատկությունները, որոնք օգնում են տարբերել այդ քաղաքը այլ վայրերից: Այս տարբերությունները կարևոր դեր են խաղում սոցիալական և տնտեսական զարգացման հնարավորություններ ստեղծելու գործում: Ոչ բոլոր քաղաքներն են հավասարապես հարմար տարբեր տեսակի արդյունաբերության կամ տնտեսական հնարավորության համար[2]: Սիսիանի հաջողության բանալին հասկանալն է, թե ինչն է քաղաքում լավ ստացվում, իսկ ինչը՝ ոչ: Դա անելու համար անհրաժեշտ է գտնել խնդիրները, հնարավորությունները, ռեսուրսները, տեսլականները, շահառուներին և նպատակները՝ Սիսիանի տեղը համաշխարհային մակարդակում գտնելու և քաղաքի դերը բացահայտելու համար:

Դա կարող է լինել պատմություն խորը արմատներ ունեցող էկոլոգիական, հոգևոր վայրի մասին՝ ժայռապատկերները, հնագույն աստղադիտարանը և եկեղեցիները կարող են ցույց տալ իրական պատմությունը, պատմական կապերը և քաղաքին հետաքրքրության նոր մակարդակ հաղորդել: Այս փուլի հիմնական խնդիրն է բարձրացնել իրազեկվածությունը գոյություն ունեցող ռեսուրսների մասին, որոնք կարող են աշխատել մշակույթի և ստեղծարարության համար, ցույց տալ հնարավորությունները և գտնել ստեղծարար լուծումներ, որոնք կարող են լուծել առկա խնդիրները: Բացահայտումը պետք է կատարվի տարբեր տեսանկյուններից, ինչը ոգեշնչում կտա

հետևյալ ուղղություններին[3]՝

- *Բնության գեղեցիկ կամ հետաքրքիր տեսարաններ, ներառյալ՝ երկրաբանությունը և վայրի բնությունը*
- *Ժամանցային խաղեր դրսում*
- *Տեղական պատմությանը և մշակույթին ծանոթանալու վայրեր*
- *Տեղական արվեստը և արվեստագետներին տեսնելու և հաղորդակցվելու հնարավորություններ*
- *Փառատոներ և միջոցառումներ, որոնք նշում են տեղական պատմությունը, բերքահավաքը, կերակուրները, երաժշտությունը կամ հայտնի մարդկանց*
- *Կառուցված տեսարժան վայրեր, ինչպիսիք են հուշարձանները, զվարճանքի պուրակները, կամ թեմատիկ զբոսայգիները*
- *Տեղական ձեռնարկություններ և մանրածախ խանութներ, որտեղ այցելուները կարող են գնումներ կատարել կամ ստանալ լավ սպասարկում:*

[2] http://cityobservatory.org/
[3] https://www.extension.umn.edu/community/news/tourism-assets.html

Քաղաքի մասին Հայաստանում տարածված է «Սիսիանը մշտական ցուրտ քաղաք է» կարծրատիպը: Այս կարծրատիպը կարելի է դրականորեն օգտագործել զովազդային նյութերում: Սիսիանը կատարյալ վայր է ամռանը հանգստյան օրերին՝ ջրվեժ, լիճ հրաբխի խառնարանի մոտ, ընթրիք ընկերների հետ տեղական ռեստորաններում, վայելելով զով եղանակը: Սիսիանի մասին գոյություն ունեցող առասպելների և գաղափարների հետ աշխատանքը հնարավորություն է ընձեռում քաղաքի համար գտնել յուրօրինակ ուղղվածություն, որը կհետաքրքրի ոչ միայն զբոսաշրջիկներին, այլ նաև մարդկանց, ովքեր կցանկանան Սիսիանում ժամանակ անցկացնել այն ավելի խորը ուսումնասիրելու համար:

2. Հասանելիություն, մատչելիություն և մասնակցություն

Նոր գաղափարների զարգացումը և նոր նախագծերի իրականացումը պետք է լինի թափանցիկ, հասանելի և ներառական բոլոր մասնակիցների համար: Տեղի բնակչությանը, մշակութային գործիչներին և այլ շահառուներին դյուրին է ներգրավել, սակայն նրանք չունեն պահանջվող փորձը և ինքնավստահ չեն: Սիսիանի համար ամենահարմար ռազմավարությունը փոքրամասշտաբ, փորձնական նախագծերից սկսելն է, այլ ոչ թե մեծ նախագծերին ձեռնամուխ լինելը: Ստեղծարար գաղափարների, բիզնեսների և նախաձեռնությունների նախագծումը կարող է քաղաք բերել նոր մարդկանց, մտքեր և հնարավորություններ: Սա էլ իր հերթին կխթանի քաղաքի համայնքի ներուժը և կօժանդակի նրանց ավելի մեծ ծրագրեր իրականացնել: Այսպես, օրինակ՝ կենտրոնանալով միայն զբոսաշրջության զարգացման վրա՝ քաղաքում կարելի է զբոսաշրջության մասին տեղեկատվություն տրամադրող կենտրոն բացել, ստեղծել համապատասխան ծրագրեր, ուղիներ մշակել, ստեղծել քաղաքի բրենդը, համագործակցել զբոսաշրջության գործակալությունների հետ՝ քաղաքը տարածաշրջանում առաջ տանելու և զբոսաշրջությունը զարգացնելու նպատակով: Նման գործողություններից կարող է նաև լինել քաղաքի ուղեցուցային քարտեզի մշակումը, որը այցելուներին կօգներ կողմնորոշվել, թե որ վայրերն են այցելության արժանի, տեղական ապրանքները, ինչպես օրինակ, մեղրը, բույսերը, ձեռքով պատրաստված իրերը որտեղ են վաճառվում: Նման քարտեզի մշակումը թվով ավելի շատ այցելուների կգրավի, կխթանի քաղաքում հյուրանոցների և ռեստորանների բիզնեսը, ինչպես նաև կապահովի տեղական արտադրության ապրանքների վաճառքը:

Սիսիան քաղաքի բրենդավորումն ու շուկայում դիրքավորելը պետք է պարփակի թե արտաքին, թե ներքին բաղադրիչներ: Անհրաժեշտ է մշակել քաղաքում կողմնորոշվելու երկլեզու համակարգ /խանութի ցուցանակներ, սլաքներ/, քաղաքի արտաքին տեսքի նկարագրիչներ, որոնք Սիսիանը ճանաչելի կդարձնեն: Անհրաժեշտ է, որ քաղաքում մեկնարկի զբոսաշրջիկներին և այցելուներին գրավելու առաջխաղացման արշավ՝ մշակութային միջոցառումների, փառատոների, ցուցահանդեսների, սեմինարների մասնակցությամբ: Ցանկալի է, որ զովազդային նյութերը /տեսահոլովակները, բրոշյուրները, կայքերը/ թողարկվեն հայերենից բացի անգլերենով, ռուսերենով և պարսկերենով:

3. Տաղանդների ներգրավում և հմտությունների զարգացում

Ստեղծարար արդյունաբերությունների զարգացումը պահանջում է հմուտ

քաղաքի ակտիվ բնակիչների, արհեստավարժների, մշակութային և ստեղծարար առաջնորդների մասնակցությունը: Հմտություններ կարելի է զարգացնել զանազան ուղիներով՝ վերապատրաստման, շարժունության ծրագրերի, կրթական այցերի և գիտաժողովների միջոցով: Սիսիանը ստեղծարար դարձվելու ամենակայուն միջոցը մարդկանց ներուժի մեջ ներդրումներ կատարելն է և նրանց ինքնադրսևորման համար հնարավորություններ ստեղծելը: Եթե չենք ուզում մոռացության մատնել ավանդական մեթոդները, անհրաժեշտ է, որ արհեստների կենտրոնում թանգարանի հետ համագործակցելու արդյունքում մեկնարկեն հետազոտական նախագծեր և ուսումնասիրվեն տեղի ավանդույթները և ծեսերը: Նման ուսումնասիրությունները կարող են հաջորդիվ մշակվել արվեստագետների և գիտնականների կողմից: Հմտությունների զարգացումը պետք է ընդգրկի ոչ միայն ձեռքի վարպետության, այլև գործարար հմտություններ: Դեռ ավելին ՝ անհրաժեշտ է մեկնարկել միացյալ մարքեթինգային ծրագիր՝ Սիսիանը մշակութային և ստեղծարար ռեսուրսներով հանդերձ միջազգային շուկաներում ներկայացնելու համար:

Արվեստագետներին, մշակույթի և լրատվամիջոցների մասնագետներին ու գիտնականներին կօգնեն կարճատև կրթական այցերը: Այսպես, օրինակ, հնագետներին հասցեագրված համաժողովը՝ միջազգային համալսարանների հետ համատեղ կարող է կրթական հարթակ հանդիսանալ /խոհարարություն, ավանդույթներ, քաղաքի ուսումնասիրություններ, հնագիտություն և այլն/ և գրավել բլոգերներին, լրագրողներին, քանդակագործներին և արվեստագետներին:

Առաջին փուլի ցուցիչներն են քաղաքի ռազմավարությանն ու քաղաքականությանը առնչվող նյութերի թողարկում, կառավարության և ՀԿ-ների կողմից ներկայացված թափանցիկ զեկույցների, քաղաքում նոր կրթական ծրագրերի և շարժունությանը միտված նախագծերի առկայություն:

4.2. Երկրորդ փուլ. անհրաժեշտ պայմանների ստեղծում

1. Քաղաքական և հանրային հայեցակարգի մշակում

Կայուն ստեղծարար ծրագրի, քաղաքականության և կանոնադրության զարգացումը և տեղի նախագծերի մասնակցային բյուջետավորումը անհրաժեշտ քայլ է ստեղծարար արդյունաբերությունների զարգացման գործում: Շահառուները պետք է մասնակից լինեն քաղաքի ստեղծարար զարգացման ռազմավարության մշակմանը՝նպատակները սահմանելու և պարտականությունները կիսելու միջոցով: Հնարավոր է, որ անհրաժեշտ լինի քաղաքի շահառուներից բաղկացած ներկայացուցիչների խումբ ստեղծել, ովքեր կանոնավոր կհանդիպեն և կաշխատեն ռազմավարության վրա: Խումբը նաև քաղաքի համայնքի համար հանձնարարականներ ու գաղափարներ կմշակի: Խումբը պատասխանատու կլինի ռազմավարության մշակման և քաղաքի ծրագրերի և նախագծերի զարգացման համար: Այն կհանդիպի կանոնավոր, նվազագույնը՝ ամիսը մեկ անգամ, իսկ խմբի անդամները կաջակցեն միմյանց գաղափարների զարգացման, ռազմավարության ծրագրավորման թափանցիկության ապահովման, շահառուների ներգրավման, գործընթացի և արդյունքների կառավարման գործում: Գործընթացի ծրագրավորումը ինքնին շատ ավելի կարևոր է, քան ամփոփիչ փաստաթուղթը:

Եթե հաշվի առնենք, որ քաղաքի խորհուրդը քաղաքի համար որևէ ռազմավարություն չի մշակել, նման փաստաթղթի առկայությունը կարող է հաջորդիվ պաշտոնական փաստաթղթերի սկիզբը հանդիսանալ:

Անհրաժեշտ է, որ Սիսիանում ներդրվի հասարակական աջակցության համակարգ՝ միացած ստեղծարար ձեռներեցության զարգացմանը, որին կօժանդակեն նաև կանոնադրությունը, կրթությունը և ֆինանսները:
Գործընթացի արդյունքում հնարավոր է ստեղծել «Ստեղծարար Սիսիան» հիմնադրամ՝ ստեղծարար նախագծերի և նախաձեռնությունների ֆինանսավորման համար: Լավ կլինի, եթե քաղաքի իշխանությունները զարգացնեն այլընտրանքային ֆինանսական գործիքներ՝ մշակութային և ստեղծարար հատվածների համար:

Քաղաքում պետք է կիրառվի մասնակցային բյուջետավորումը. *ժողովրդավար գործընթաց, որը ենթադրում է, որ համայնքի անդամներն են որոշում, թե ինչպես է ծախսվելու հանրային բյուջեի մի մասը:*[4] Այս ճանապարհով քաղաքի ամենակարևոր ենթակառուցվածքները զարգացում կապրեն: Քաղաքացիական հասարակության հատվածի աշխատանքը պետք է լինի թափանցիկ և ընթանա համայնքի մասնակցությամբ: Այսպես, օրինակ, կարելի է ստեղծել հասարակական նախաձեռնություններին ուղղված համայնքային հիմնադրամ: Նման հատուկ ծրագրերը կարող են օժանդակել երիտասարդության, գործարար մարդկանց, մշակութային գործիչների և ստեղծարար մասնագետների համար նախատեսված կրթական և աշխատանքային այցերին: Հարկավոր է լուրջ լուծում գտնել երիտասարդության գործազրկության խնդրին, որպեսզի երիտասարդների հոսքը դեպի Երևան նվազի: Սիսիանի շարժունության ծրագիրը կարող է օժանդակել, որ Սիսիանի տաղանդավոր երիտասարդները այցելեն այլ վայրեր, և որ տաղանդավոր մարդիկ այցելեն քաղաք:

2. Ռազմավարական ղեկավարության և շարժունության աջակցություն

Երկարաժամկետ ծրագրավորումը, արդյունքների մշտադիտարկումը և անհրաժեշտ ռազմավարության վերամշակումը արդյունավետ կառավարման հիմնաքարն է: Այս դերում կարող է հանդես գալ կամ քաղաքի որևէ հաստատություն, կամ ՀԿ, որը ղեկավարում է ռազմավարություն, առաջնահերթություններ, նախագծեր և ծրագրեր: Կարևոր է, որ այս փուլում երկխոսության մեջ ներգրավվեն նաև քաղաքի շահառուները: Սիսիանի սակավաթիվ ակտիվիստները լավ կրթված են և մոտիվացված: Քաղաքի պաշտոնական իշխանությունները պետք է իրենց իսկ պահելաձևով դրական փոփոխություններ ցույց տան: Տնտեսական և քաղաքական համակարգերը ներառական, թափանցիկ և գրավիչ դարձնելը ժամանակ է պահանջում, սակայն այն կօգնի վստահություն ձեռք բերել և արդյունքում ստեղծել երկու կողմերի համար շահավետ իրավիճակ: Սիսիանին իրական գործընկերն են հարկավոր, իսկ ներառականությունն ու թափանցիկությունը գրավիչ են ներդրողների և նվիրատուների համար: Անհրաժեշտ է օգնել շրջանի մասնագետներին կրթական ծրագրեր մշակել և որակի չափորոշիչներ սահմանել: Խուսափել է պետք այն

[4] https://www.participatorybudgeting.org/

ռիսկային ծրագրերից, որոնք գրավում են ներդրումներով, սակայն չեն զարգացնում հմտություններ և թափանցիկ չեն: Քաղաքի նախագծերում պետք է ներգրավված լինեն քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները և գործարար հատվածը: Բոլոր ծրագրերի, ներառյալ քաղաքի կառավարման նախագծերի հիմքում պետք է լինեն , թափանցիկության և համայնքի ներգրավման սկզբունքները: Սա վերաբերում է նաև ծրագրի համապատասխան փաստաթղթերը առցանց տեղադրելուն:

3. Ֆիզիկական ենթակառուցվածքի զարգացում

Քաղաքի բոլոր հանրային տարածքները, բացառությամբ կենտրոնական հրապարակի, անհատ ձեռներեցների սեփականությունն են: Մինչդեռ, Սիսիանի երիտասարդությունը պնդում է, որ քաղաքում բացակայում են կանաչ գոտիները, և իրենք ստիպված են լինում զբոսնել փողոցներում: Համայնքը պահանջում է, որ քաղաքում վերականգնվեն զբոսայգիները: Անհրաժեշտ է քաղաքում գտնել ամայի տարածքներ կամ լքված շինություններ, որտեղ հնարավոր կլիներ ստեղծել նոր հաստատություններ, ինչպես օրինակ, քաղաքի ստեղծարար զարգացան կենտրոն, մշակույթի և նորարարության կենտրոն կամ զբոսաշրջիկներին տեղեկատվություն տրամադրող գործակալություն: Ամայի տարածքները հրաշալի վայր են փառատոնների, մշակութային և տեխնիկական միջոցառումների, գործարար հավաքների, զանազան համայնքների հանդիպման, համատեղ աշխատավայրի, ստեղծարար հանգույցների և ստեղծարար բիզնես ինկուբատորների համար: Լքված շինություններին և ամայի տեղերի նոր շունչ կարող են հաղորդել թե սիսիանցի, թե հրավիրված մասնագետները, ուրբանիստները, մշակութային կառավարիչները, երաժիշտները, արվեստագետները, տեխնիկական մասնագետները և այլոք: Անհրաժեշտ է, որ քաղաքի զարգացման համար պատասխանատու խումբը վերլուծություն իրականացնի և քարտեզագրի քաղաքի ամայի տարածքները: Այս գործում կարող են ներգրավվել տեղի իշխանությունները, բիզնեսները, հատկապես զբոսայգիների սեփականատերերը, քաղաքացիներն ու երիտասարդները: Այսպիսով, անհրաժեշտ է, որ քաղաքը ստեղծի քաղաքի զարգացման ծրագիր, վերանայի քաղաքի՝ տարածքների բաժանումը և մարդկանց զանազան խմբերի համար ժամանցային հնարավորություններ ստեղծի:

4. Սմարթ, շարժական, վիրտուալ և թվայնացված տեխնոլոգիաների կիրառում

Տեխնոլոգիական համայնքը ընդլայնվելով՝ քաղաքը ներգրավվում է նաև ստեղծարար զարգացման գործընթացում: Այստեղ կարևորը զանազան ոլորտների համակցությունն է. տեխնոլոգիաներ, բիզնես, արվեստ և ստեղծարարություն: Ճարտարագետներից և արվեստագետներից կազմված թիմերը կարող են համագործակցել քաղաքի զարգացմանը օժանդակող նոր նախագծերի, բիզնես ծրագրերի, նախաձեռնությունների, շուրջ, իսկ տեղի զբոսաշրջության գործակալությունները և արհեստավորները կարող են համատեղ մշակել զբոսաշրջիկներին գրավող նոր ապրանքներ և ծառայություններ: Զբոսաշրջիկները կարող են օգտվել հավելվածներից կամ բջջային հեռախոսների համար վերամշակված կայքերից: Արհեստավորների ձեռքի աշխատանքը կարելի է

զովազդել առցանց հարթակներում: Գլոբալ տեխնոլոգիաները Սիսիանը կարող են դարձնել որոնման խաղերի մի վայր, որտեղ կբացահայտվեն Սիսիանի բազմաթիվ շերտերը և պատմությունները: Կարելի է կազմակերպել հեքաթոններ՝ հատուկ միջոցառումներ նվիրված տեխնիկական հավելվածների մշակմանը: Այս միջոցառմանը մասնակցում են հանրային կապերի, մարքեթինգի, էկոլոգիայի, տեխնոլոգիայի, հումանիտար ոլորտներում ներգրավված զանազան մասնագետներ, ովքեր նոր էլեկտրոնային ծառայություններ են մշակում քաղաքի համար: Կարևոր է վերլուծել օգտատերերի, ինչպես նաև թե Հայաստանից, թե արտերկրից ժամանած այցելուների տվյալները և զովազդել Սիսիանը էլեկտրոնային հարթակներում: Սիսիանի մասին գրված հոդվածները և հանձնարարականները կարող են արտերկրից, օրինակ՝ Իրանից գրավել բազում զբոսաշրջիկների: Քաղաքի եզակիությունը կախված չէ վերջինիս չափսից, այլ միայն՝ վայրի և բնակիչների ներուժի խելացի շահագործումից:

Երկրորդ փուլի ցուցիչներ. Սիսիանի ռազմավարություն, ստեղծարար արդյունաբերություններին օժանդակող ծրագրեր և մեխանիզմներ, թափանցիկ ֆինանսական մեխանիզմներ, դատարկ տարածքների քարտեզագրում և վերականգնում, ենթակառուցվածքային բարեփոխումների բազմատեսակ ծրագրեր, կրթական եւ շարժունության ծրագրեր, տեղական կառավարման հասարակական հաշվետվություններ:

4.3. Երրորդ փուլ: օժանդակ էկոհամակարգ

1. Ստեղծարար տնտեսության զարգացում

Մեր նպատակն է Սիսիանը դարձնել այնպիսի վայր, որտեղ մարդիկ կկարողանան ապրել և ստեղծարար աշխատանքով զբաղվել: Այս նպատակին հասնելու համար Սիսիանը պետք է աշխատի իր ստեղծարար տնտեսության ներուժը զարգացնելու ուղղությամբ: Սա հնարավոր է, եթե խրախուսվեն ձեռներեցությունն ու նորարարությունը, ստեղծվեն նոր ստեղծարար խմբեր, որտեղ կարող են ընդգրկվել արհեստավորներ, վարպետներ, տեխնիկական մասնագետներ, արվեստագետներ, զբոսաշրջության գործակալներ, գյուղատնտեսության մասնագետներ, այլ մարզերի մշակութային գործիչներ: Ստեղծարար տնտեսության զարգացմանը պետք է հաջորդեն բնակչության աճը, նոր աշխատատեղերի ստեղծումը, հանրային տարածքների լավ շահագործումը, տրասնպորտային համակարգի զարգացումը, հեծանվային նոր ուղիների և հետիոտների համար նախատեսված տարածքների ստեղծումը, սոցիալական նորարարության և մարդկային կապիտալի մեջ կատարված ներդրումները: Մեր նպատակն է, որ ստեղծարար ձեռներեցները դառնան Սիսիանի տնտեսական համակարգի կարևոր օղակը:

Տեխնոլոգիաներով դաստիարակված երիտասարդների նոր սերունդը կարող է նոր տնտեսական զարգացման հիմքը հանդիսանալ: Դպրոցներում անհրաժեշտ է իրականացնել ստարտափներին և ստեղծարարությանը առնչվող ծրագրեր: Սիսիանը կարելի է դիտարկել որպես կրթական միջավայրի զարգացման ինկուբատոր, վայր, որտեղ տեղի բիզնեսները ֆինանսական և կրթական օժանդակություն են ստանում: Այս ամենը կօգնի ստեղծել խմբեր և ամրապնդել դրանք: Հնարավոր է նաև, որ շրջանում ստեղծվի քաղաքի բիզնես դպրոց, որտեղ

կուսանեն ոչ միայն Սիսիանի, այլև՝ ողջ շրջանի երիտասարդները: Այս բիզնես դպրոցը կարելի է ստեղծել նվիրատուների կամ քաղաքային իշխանությունների ջանքերով: Հնարավոր է նաև, որ դպրոցը լինի տեխնիկական համալսարանի ներքո:

Շրջանի հյուրանոցներում և տեսարժան վայրերում կարող են տեղադրվել քաղաքի բնակչության կողմից թողարկված տեղական ապրանքները ցուցադրող սթենդերը: Ապրանքները պետք է ունենան բարձրորակ փաթեթավորում և կրեն քաղաքի պաշտոնական կնիքը: Փառատոնների և այլ մշակութային միջոցառումների ժամանակ կարելի է բաժանել քաղաքի բրենդը կրող ապրանքներ: Զբոսաշրջության ծառայությունների մատուցման պայմանների բարելավման համար անհրաժեշտ է, որ երիտասարդները վերապատրաստվեն այս հատվածում: Այս առումով կարելի է փոխանակման այցեր կազմակերպել արտերկրյա կամավորների և երիտասարդ մասնագետների համար, ովքեր կաջակցեն Սիսիանի հյուրանոցների և ռեստորանների ղեկավար-անձնակազմին: Այս ամենը տեղի երիտասարդ բնակիչներին հնարավորություն կընձեռի ինքնուրույն զարգանալ գործարար ոլորտում և կոգեշնչի, որ բիզնեսը նորովի ընկալվի:

2. Հաղորդակցության և կապերի ամրապնդում

Սիսիանը կապված է իրեն շրջապատող գյուղերի և քաղաքների հետ: Այդ իսկ պատճառով էլ, անհրաժեշտ է, որ ողջ տարածաշրջանում գտնվող շահառուների միջև լինի կանոնավոր հաղորդակցություն, և որ նրանք միասին աշխատեն համատեղ նախագծերի և ծրագրերի վրա: Սիսիանը և հարակից տարածքները պետք է գիտակցեն, որ համագործակցությունն ավելի արդյունավետ է, քան մրցակցությունը: Այլ քաղաքների հետ համագործակցելը կարող է հանգեցնել նոր գաղափարների, տարածաշրջանում գրավել զբոսաշրջիկների և տաղանդավոր մասնագետների: Համատեղ նախագծերը կօգնեն ընդլայնել հնարավորություններն ու միջոցները: Քաղաքների համագործակցության արդյունքում պետք է մշակել տարածաշրջանային մշակութային քարտեզներ, զբոսաշրջային նոր երթուղիներ, սկսել ջատագովության արշավներ՝ տարածաշրջանը ՅՈՒՆԵՍԿՕ ցուցակում ընդգրկելու ուղղությամբ, մեկնարկել տարածաշրջանում ստեղծարար բիզնեսների աջակցող ծրագրեր, պաշտպանել տեղի պատմական հուշարձանները և այլն: Կարելի է նաև միջազգային մակարդակով համագործակցել այլ երկրների քաղաքների հետ: Հաղորդակցությունը ընդլայնում է համայնքի կապերի շրջանակը, աջակցում հասարակությանը, խթանում վստահությունը, օգնում, որ հասարակության անդամները ապրեն ներդաշնակության մեջ, ներգրավում քաղաքացիներին և ոգևորում հասարակության անդամներին մասնակցել համայնքային կյանքին և ժողովրդավարությանը:

3.Բարեկեցիկ միջավայրի ստեղծում

Ստեղծարար Սիսիանի հիմնական նպատակը ոգեշնչող միջավայր, այլ ոչ թե վարկանիշ ստեղծելն է: Քաղաքն, անշուշտ, կարիք ունի կանաչ գոտու, վերանորոգման և զարգացման: Հետիոտների և հեծանվորդների համար նախատեսված ճանապարհները, հաղորդակցման ֆիզիկական և վիրտուալ հարթակների զարգացումը բազմազանություն կհաղորդեն քաղաքին և բարձրորակ տարածքներ կստեղծեն: Տարածաշրջանում կամ հարակից վայրերում

ճանապարհորդելիս ուղևորները ուշադրություն չեն դարձնում քաղաքական պատնեշներին. անհրաժեշտ է, որ ծառայությունների մատուցման մակարդակը համապատասխանի նրանց ակնկալիքներին: Նրանք կարող են այցելել սարերում տեղակայված ֆերմաներ, ինքնուրույն մեքենա վարել մայրուղիով կամ այցելել տեղի վարպետներին ու արվեստագետներին:

4. Ընդունենք առանձնահատկությունները և օժանդակենք հանրային տարածքների ստեղծմանը

Սիսիանի և քաղաքը շրջապատող պատմությունների յուրահատկությունը պետք է տեղ գտնի իրական նախագծերում և քաղաքում՝ նոր քանդակների, կամ հատուկ կողմնորոշման համակարգի միջոցով: Միևնույն ժամանակ, կարևոր է, որ այն օժանդակի հանրային տարածքների վերաարժևորմանը:

Հանրային տարածքի նախագծում ասված է, որ հանրային տարածքների ստեղծումը մարդկանց ոգեշնչում է նորովի պատկերացնել և նոր շունչ հաղորդել հանրային տարածքներին՝ դրանց համարելով համայնքի սիրտը: Հանրային տարածքների ստեղծումը ոչ միայն սերտացնում է մարդկանց և վայրերի միջև եղած կապը, այլև օգնում է նրանց հասնել համատեղ նպատակներին՝ գերագույն արդյունքով՝ հանրային ոլորտի ձևավորման միջոցով: Հանրային տարածքի ստեղծումը միայն քաղաքի ավելի լավ ձևավորմանը չէ միտված.այն *խրախուսում է ստեղծարար մոտեցումը ՝ մեծ ուշադրություն դարձնելով այն ֆիզիկական, մշակութային և հասարակական ինքնություններին, որոնք սահմանում են վայրը և աջակցում վերջինիս շարունակական զարգացումը: Համայնք ակտիվ մասնակցությամբ՝ հանրային տարածքների ստեղծման արդյունավետ գործընթացը հիմնվում է համայնքի առավելությունների և ներուժի վրա և հանգեցնում այնպիսի որակյալ հանրային տարածքների ստեղծմանը, որոնք նպաստում են մարդկանց առողջությանը, երջանկությանը և բարեկեցությանը:* Սիսիանում հանրային տարածքների ստեղծումը կարող է ընթանալ տարածքների մեծ համայնք ստեղծելու կանոնադրությանը համաձայն: [5] Ամայի տարածքները կարող են հանդիպման վայր դառնալ Սիսիանի զարգացմամբ մտահոգված քաղաքացիների համար, ինչպես նաև դառնալ հանրային դասախոսությունների կամ համատեղ քաղաքի զարգացմանն ուղղված նախագծերի քննարկման հարթակ: Այստեղ կարող են ելույթ ունենալ արտերկրյա մասնագետներ, գիտնականներ, Սփյուռքի հայտնի ներկայացուցիչներ, ինչպես նաև Հայաստանի այլ վայրերից ժամանած հյուրեր:

Քաղաքում գործող խեցեգործարանների ներուժը գործածելով՝ քաղաքում կարելի է բացել վարպետության և արհեստների կենտրոն, որտեղ կարելի է անցկացնել վարպետության դասեր: Հետագայում այս արհեստանոցները կարելի է վերածել տարածաշրջանային արհեստների զարգացման հանգույցների: Այստեղ կարելի է ընդգրկել նաև քաղաքի արվեստի դպրոցի սաների համար նախատեսված ծրագրեր, իսկ քաղաքի բիզնեսներին ծանոթացնել հմտությունների ձեռքբերում-թողարկում-սպառում փուլերին: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մոտ ապագայում շատ հարևան գյուղեր լինելու են Սիսիանի կառավարման ներքո, նման կենտրոնը կարող է ավանդական արհեստների իմացության և փորձի

[5] https://www.pps.org/reference/11steps/

փոխանակման բացառիկ վայր դառնալ տարածաշրջանում: Դրա հետ մեկտեղ, տեխնոլոգիական գործիքների ներդրումը կենտրոնում կարող է այն ֆաբ-լաբորատորիայի վերածել: Ճարտարագետների և զբոսաշրջության կառավարիչների համատեղ ջանքերի արդյունքում ծնվեց Սիսիանի ճարտարագետների ցուցահանդեսը, որին մասնակցեցին արտերկրյա հյուրեր և մասնագետներ: Միջոցառումը հնարավորություն ընձեռեց կապեր ստեղծել համաշխարհային մասնագետներ հետ:

5. Քաղաքացիների բարեկեցության խթանում

Հանրային առողջապահության ոլորտում ուսումնասիրություն կատարող գիտնականներ Վայզմենն ու Բրաշերը գտնում են, որ «Համայնքի բարեկեցությունը ընկած է հասարակական, տնտեսական, միջավայրային, մշակութային և քաղաքական պայմանների համակցություն մեջ, որում անհատներն ու համայնքը անհրաժեշտ են համարում իրենց զարգացման և ներուժի դրսևորման համար»: Կյանքի որակը սերտորեն կապված է քաղաքի էկոլոգիական ներուժին:. Բնակիչները հաճախ են ասում. «Այստեղ կարելի է երեխաներ մեծացնել:» Շրջակա միջավայրի հետ կապված ավանդույթները, արշավները, բույսերի հավաքը առօրյա կյանքի մի մասն են կազմում, և սրա մասին պետք է բազմիցս նշել: Բարեկեցությանն են առնչվում նաև ապահովության և խոսքի ազատության հարցերը: Մի քանի երիտասարդ աղջիկ հետազոտողներին պատմեցին, որ վախենում են երեկոյան սրճարան գնալ, քանի որ վախենում են վիրավորվելուց կամ հալածվելուց: Եթե քաղաքն ապահով չլինի տեղի բնակչության կամ այցելուների համար, ապա այն ստեղծարար և զբոսաշրջիկներին հյուրընկալող քաղաքի վարկանիշ չի ունենա. չէ՞ որ հենց եզակիությունն ու հանդուրժողականությունն են գրավում հեռու և մոտիկ շնորհալի մարդկանց:

Երրորդ փուլի ցուցիչները հետևյալն են. իրականացված նախաձեռնություններ, ստեղծարար խմբի ստեղծում, քաղաքում ծնված նախաձեռնություններ և նախագծեր, զարգացող ստեղծարար տնտեսությունից բխող եկամուտ:

5. ՀԱՎԵԼՅԱԼ ՕՐԻՆԱԿՆԵՐ

Առաջին փուլ

- Վորփսվեդե [6] , Գերմանիա. Եվրոպայում գտնվող ամենահին արվեստի կենտրոնը: Արվեստն ու մշակույթը սերտորեն կապված են քաղաքի ինքնության հետ:
- Consorcio de la Ciudad Monumental /մոնումենտալ քաղաքի կոնսորցիում/. մշակութային ժառանգության պահպանման և առաջխաղացման գործընթացում տեղի գործիչների ներգրավում [7]
- Հնագիտական հիմնադրամ Ֆրիուլի Վենեցիա Ջիուլի տարածաշրջանի համար[8]
- Քաղաքի տարեկան հաշվետվություն , Գրեֆթոն[9], Մասաչուսեթս, ԱՄՆ

[6] http://www.worpswede.de/index_eng.html
[7] https://www.facebook.com/MeridaConsorcioDeLaCiudadMonumental
[8] https://www.fondazioneaquileia.it/
[9] https://www.grafton-ma.gov/town-administrator/pages/annual-town-reports

- USE-IT քարտեզներ [10] ՝ տեղի պատմություններով և այլ քաղաքների ճանապարհներով
- Մինեսոտա համալսարանի զբոսաշրջության կենտրոն. [11] հանգստի և գյուղատնտեսական տուրիզմի օրինակ
- Քաղաքի ձևավորման օրինակներ՝ Լվով[12], Իվանո-Ֆրանկիվսկ[13], Ուժգորոդ[14]
- Քաղաքը զարդարող արվեստի նմուշներ. Լեբեդևի՝ Մոսկվա քաղաքի ձևավորման նախագիծը[15]
- Արվեստագետների կրթական այցեր. Կոշիցե [16], Մոզիչի [17], գյուղական վայրերում, [18], La Fragua արվեստանոցում, Իսպանիա[19]
- Գարդիան թերթում Իրանի մասին տպագրված հոդվածը նաև երկրի գովազդն է. սա լավ օրինակ է այն բանի, թե ինչպիսի արդյունքների կարելի է հասնել Սիսիան կրթական այցով ժամանած լրագրողների օգնությամբ:[20]

Երկրորդ փուլ

- Մասնակցային բյուջետավորում, Վրաստանի օրինակ[21]
- Ֆինանսական աջակցության օրինակ. տարածքաշրջանային մշակութային հիմնադրամ [22]
- Ստեղծարար Էսեն քաղաքում տեղի ունեցող գործողություններն օգնեցին հասկանալ տարածաշրջանային համագործակցության տրամաբանությունը[23]
- Համագործակցող կողմ՝ ինստիտուտ. միջազգային Գրադենզ Սիթի ինստիտուտ [24]
- Կրթության ոլորտում արված մասնավոր նվիրատվությունների մասին. Լվովի Մետրոպոլիտեն Շեպտիտցկի[25] կենտրոնի 15 000 նվիրատուներից ստացած գումարը կազմում էր մոտ 5.7 մլն. ԱՄՆ դոլար:
- Հանրային տարածքների վերականգնման օրինակներ. Alley Fair[26] միջոցառումը կազմակերպվում է համայնքային մասշտաբով և նպատակ ունի վերականգնել և վերափոխել Ֆարգոյի կենտրոնի նրբանցքները՝ այնտեղ ցուցադրելով տարածաշրջանին հատուկ լավագույն ուտելիքները, երաժշտությունը և արվեստը: Միջոցառման նպատակն է ձևավորել միջավայր, որը «կխրախուսի այցելուներին նորովի հայացք նետել քաղաքի տեսարաններին»:

---

[10] https://www.use-it.travel/
[11] https://www.tourism.umn.edu/
[12] http://www.urban-project.lviv.ua/php_uploads/data/articles/ArticleFiles_UA_215.pdf
[13] https://dma.if.ua/files/dodatok_do_porjadku_wywisky.pdf and https://drive.google.com/file/d/0B2Sw13muyW3qLXVXQ3dfY0VlQmM/view
[14] http://rada-uzhgorod.gov.ua/web/uploads/old_docs/rada/pravula_vstanov_vuvisok.pdf
[15] https://www.artlebedev.ru/moscow/design-code/
[16] http://www.kair.sk/
[17] https://www.facebook.com/pg/The-Muzychi-Expanded-History-Project-Private-residency-program-453124678154022/photos/?tab=album&album_id=813518285447991
[18] http://www.kulttuurikauppila.fi/
[19] http://lafragua.eu/
[20] https://www.theguardian.com/travel/2017/jan/29/motorcycling-through-iran-travel-lois-pryce-women-adventure
[21] http://www.onecaucasus.org/marneuli-participatory-budget
[22] http://regionalartsnsw.com.au/grants/regional-cultural-fund/
[23] http://urbact.eu/sites/default/files/local_action_plan_essen_2015_0.pdf
[24] http://www.gardencitiesinstitute.com/
[25] https://ucu.edu.ua/en/news/obitsyaj-malo-roby-bagato-tsentr-mytropolyta-sheptytskogo-urochysto-vidkryto/
[26] http://www.alleyfair.com/

- Արվեստագետի նրբանցք նախագիծը վերջերս մեկնարկել է Բիսմարկի կենտրոնում և ոգևորել քաղաքի բնակիչ արվեստագետներին [27] ստեղծել բացօթյա ցուցահանդես քաղաքի հենց կենտրոնում լքված մի նրբանցքում:
- Ենթակառուցվածքի վերականգնման օրինակներ. High Line [28] հայտնի զբոսայգին Նյու Յորք քաղաքի ամենասյուրռեալիստական վայրերից մեկն է: Նախկինում բեռնափոխադրող այս երկաթգիծը վերափոխել են զբոսայգու 2009 թվականին, իսկ զբոսայգու երկրորդ և երրորդ հատվածները բացվել են 2011 և 2014 թվականներին: Հետաքրքիր է, որ նախաձեռնությունը քաղաքի 2 բնակիչներինն է: Սա ևս մեկ անգամ ապացուցում է, որ փոփոխությունների հիմքում ընկած են խելացի գաղափարներ, որոնք իրականացվում են խիզախների կողմից:
- Հնչյունների տարածք ծրագրում ներգրավված են երաժիշտներ, արվեստագետներ, ուսանողներ և քաղաքացիական առաջնորդներ, ովքեր մասնակից են դառնում մեկշաբաթյա տևողությամբ համայնքային մի միջոցառման՝ հագեցված ներկայացումներով և այլ մշակութային միջոցառումներով: Նախագծի միջոցառումները կազմակերպվում են Լուիզանայի մշակութային շրջանների համատեղ ջանքերի շնորհիվ: Ծրագրի նպատակն է աջակցել համայնքներին նորովի պատկերացնել հանրային տարածքներն ու միջանցքները:[29]
- Ցեսիս քաղաքի քաղաքապետարանի կայքը. Ցեսիսը մի փոքրիկ քաղաք է՝ 17 000 բնակիչներով[30], Ցեսիս զբոսաշրջությունը[31]:
- Լքված վայրերի քարտեզագրումը Կիևի ակտիվիստների[32] կողմից:
- Զբոսաշրջության մասին տեղեկատվություն տրամադրող արհեստական ինտելեկտ ունեցող ռոբոտներ[33] և 22 ճանապարհորդական ռոբոտ-սարքեր[34]:
- Հանրահայտ հավելվածներ. Maps.me[35]: Թեև Սիսիանը նշված է ուղեցույցում, քաղաքի մասին որևէ տեղեկատվություն տրամադրված չէ. Izi.travel: Audio Travel Guide[36]
- AlpineQuest GPS Hiking[37]. արշավորդներին կողմնորոշող հավելված
- Italian Hill Town[38] համակարգչային խաղը լավ օրինակ է այն բանի, թե ինչպես կարելի է իրական քաղաքը գործածել համակարգչային խաղեր մշակելիս:
- NPS National Mall-ը զբոսաշրջիկների համար նախատեսված արտակարգ հավելված է, որը ուղենիշների և այլ տեսարժան վայրերի մանրամասն քարտեզ է ներկայացնում, օգնում օգտատիրոջը կողմնորոշվել և ուսումնասիրել իրեն շրջապատող կառույցները՝ "Park Lens"[39] խոշորացույցի միջոցով:

Երրորդ փուլ

---

[27] http://bismarcktribune.com/gallery/downtown-bismarck-alley-art/collection_60073735-c24b-572f-b8dc-bde8bf958a58.html#1
[28] http://www.thehighline.org/about
[29] https://www.pps.org/blog/sound-places-chamber-musicians-take-streets/
[30] http://www.cesis.lv/en/cesis-municipality
[31] http://turisms.cesis.lv/en/
[32] http://texty.org.ua/d/buildings-kyiv/#16.91354/50.46502/30.52249
[33] https://www.botflux.com/tourism/
[34] https://www.30secondstofly.com/ai-software/ultimate-travel-bot-list/
[35] https://maps.me/
[36] https://izi.travel/ru/app
[37] https://www.alpinequest.net/
[38] https://www.youtube.com/watch?v=c7D6dWv9Zwk
[39] https://play.google.com/store/apps/details?id=gov.nps.nama

- Հաջորդ սերնդի քաղաքային ֆերմաներ [40]
- Թոմաս Լիբերթինիի արվեստի նախագիծը. «Մեղուները՝ քանդակագործի դերում»: [41]
- Ավանդական ձեռքի վարպետության վերարժեքորումն ու առաջխաղացումը Լիմուզին- Օբյուսոն վայրի ժամանակակից արտադրանքով:[42]
- Պեչի տարածաշրջանային ստեղծարար խումբը. ստեղծարար էկոհամակարգի կայունացում [43]
- Տարտուի ստեղծարար և մշակութային արդյունաբերությունների պալատը: Քաղաքի ստեղծարար և մշակութային արդյունաբերությունների աճը տարհանման վրա հիմնված զարգացման ծրագրի միջոցով:[44]
- Ստեղծարար Բռնոն. ստեղծարար կենտրոն նախկին բանտի փոխարեն: [45]
- Խմբերի ստեղծման օրինակը:[46]
- Մեծ և փոքր քաղաքների համագործակցություն. մետրոպոլիս Ռուռ, Գերմանիա:[47]
- Վարպետության հմտությունների վրա հիմնված կենտրոններ [48], FabLab համայնքը [49], Fablab-ը Բեռլինում [50], Կիևի ճարտարագետների փոքրիկ ցուցահանդեսը[51], հավելյալ տեղեկատվություն ճարտարագետների շարժման մասին[52]:
- Համայնքի բարեկեցության օրինակ. Ալբերտ Լիա[53]:
- Մշակութային վերլուծություն ներկայացնող, փոքր և մեծ քաղաքների զարգացման միտված հանձնարարականներ ու ռազմավարություններ պարփակող բազում իրադրություններ «Մեծ և փոքր քաղաքների մշակույթ» ուղեցույցում [54]:

---

[40] https://www.theguardian.com/sustainable-business/2014/jul/02/next-gen-urban-farms-10-innovative-projects-from-around-the-world
[41] http://tlmagazine.com/libertiny-bees/
[42] http://www.tourismelimousin.com/
[43] https://www.parcaudiovisual.cat/en/
[44] http://www.loovtartu.ee/en
[45] http://www.creativebrno.cz/
[46] https://www.behance.net/gallery/35068745/Craft-cluster-initiative-(Pattachitra)-Documentation
[47] http://archiv.ruhr2010.de/en/
[48] https://crafts.arts.ncsu.edu/ and http://www.umass.edu/craftctr/
[49] http://www.fablabni.com/what-fablab.html
[50] https://fablab.berlin/en/
[51] https://kyiv.makerfaire.com/
[52] http://www.huffingtonpost.com/brit-morin/what-is-the-maker-movemen_b_3201977.html
[53] https://www.takingcharge.csh.umn.edu/enhance-your-wellbeing/community/what-community-wellbeing
[54] http://www.cultureforcitiesandregions.eu/culture/resources/Case-studies-catalogue-2-0-complete-version-WSWE-AFJFF5

Մշակույթ և ստեղծարարություն
ԵՄ Արևելյան գործընկերության ծրագիր

Այս զեկույցը պատրաստվել է ԵՄ՝ Արևելյան գործընկերության «Մշակույթ և ստեղծարարություն» ծրագրի աջակցությամբ: Այս զեկույցի բովանդակությունը չի արտացոլում Եվրոպական միության պաշտոնական դիրքորոշումը: Այս հրատարակությունում զետեղված տեղեկատվության և կարծիքների համար ողջ պատասխանատվությունը կրում է հեղինակը:

Եվրոպական միության՝ Արևելյան գործընկերության «Մշակույթ և ստեղծարարություն» ծրագրի նպատակն է՝ ապահովել մշակութային ու ստեղծարար ոլորտների աջակցությունը, ինչպես նաև նպաստել նրանց ներդրման մեծացմանը Հայաստանում, Բելառուսում, Ադրբեջանում, Վրաստանում, Մոլդովայում և Ուկրաինայում՝ կայուն մարդասիրական, սոցիալ-տնտեսական զարգացման մեջ:

Ծրագիրը ֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից